ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

« *ՀՀՎՊ-ԳՀԱՊՁԲ-04/18*» ծածկագրով ընթացակարգի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նիստի

ք. Երևան «06» մարտի 2018թ., ժամը 11:00

Մասնակցում էին՝

Բաբայան Ռիմա	– Անձնակազմի կառավարման բաժնի պետ	ԳՊ/ԳԱՊ
Հարությունյան Լևոն	- Իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ	ԳՊ/ԳԱ
Զոհրաբյան Գոհար	-Ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման վարչության պետի տեղակալ	ԳՊ/ԳԱ
Պետրոսյան Նաիրա	-Արարողակարգի և փաստաթղթաշրջանառության վարչության պետի տեղակալ	ԳՊ/ԲԱ
Բեդիրյան Ծովինար	-Ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման վարչության գլխավոր մասնագետ	ԳՊ/ԲԱ

Հանձնաժողովի քարտուղար Աննա Անանյան

1. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների մասին

Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն ՀՀՎՊ-ԳՀԱՊՁԲ-04/18 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին ծանուցված մասնակիցներից ներկայացել է Կոպի Սերվիս ՍՊԸ-ի ներկայացուցիչը և սահմանված ժամկետում ներկայացրել նոր գնային առաջարկ:

2. Մասնակցի առաջարկած գինը

հազ. դրամ

Չ/Բ	Նախահաշվային գին	Կոպի Սերվիս ՍՊԸ	
		Առաջարկվող գինը առանց ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	**360.0**	300.0	360.0
2	**180.0**	149.75	179.7
3	**180.0**	149.75	179.7
8	**60.0**	49.95	59.94
9	**60.0**	49.95	59.94
10	**60.0**	49.95	59.94

2. Հանձնաժողովը որոշեց՝

3.1 Կոպի Սերվիս ՍՊԸ-ին 1,2,3,4,8,9,10 չափաբաժինների մասով, Նորմա-պլյուս ՍՊԸ –ին 5,7 չափաբաժինների մասով, իսկ Սմարթլայն ՍՊԸ-ին 11-րդ չափաբաժնի մասով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

3.2 Սահմանված կարգով էլեկտրոնային հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

3.3 Համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկել ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:
3.4 Քանի որ Նորմա-պլյուս ՍՊԸ–ի ներկայացուցիչը սահմանված կարգով չի ներկայացել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին, ուստի 4-րդ չափաբաժինի մասով մրցույթը հայտարարվում է չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն:
3.5 Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ եզրակացության և մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10-00-ին, սակայն ոչ ուշ, քան ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 46-րդ կետով սահմանված կարգով փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրվա ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Բաբայան Ռիմա		ԳՊ/ԳԱՊ
Հարությունյան Լևոն		ԳՊ/ԳԱ
Զոհրաբյան Գոհար		ԳՊ/ԳԱ
Պետրոսյան Նաիրա		ԳՊ/ԲԱ
Բեդիրյան Ծովինար		ԳՊ/ԲԱ

Հանձնաժողովի քարտուղար _____ Աննա Անանյան